ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2017

# ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
# ԵՎ
# ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Մաղթում ենք հաջողություն:**

# Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է գրվում *ը*.**

1) չ-նդհատել, կ-նկնի, թր-խկ, դաս-նթաց
2) որոտ-նդոստ, ան-նդմեջ, ան-նտել, ակ-նդետ
3) մթ-նկա, գահ-նկեց, այլ-նտրանք, խոչ-նդոտ
4) ան-նկեր, մարտ-նչել, դանդաղ-նթաց, ան-նդունակ

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *չ*.**

1) անտերուն-, զեղ-ել, փար-, պ-ռասեր
2) մի-ատ, գո-յուն, կառ-ել, ակնակապի-
3) հառա-անք, ա-առու, բա-կոն, դար-նագույն
4) խռ-ակ, խո-կոր, ա-ալուրջ, զոքան-

3 **Ո՞ր տառը կամ տառակապակցությունը տեղադրելու դեպքում բառի դիմաց գրված բացատրությունը ճիշտ կլինի. լուծման տարբերակներից ո՞րն է ճիշտ.**

ա. ***պ-անք*** (1. ***չր***, 2. ***ճն***) – սեթևեթանք
բ. ***թ-ր*** (1. ***յու,*** 2. ***ույ***) – գույն
գ. ***դե-ան*** (1. ***րձ,*** 2. ***դձ***) – խարտյաշ
դ. ***ը-ացք*** (1. ***թ***, 2. ***չ***) – շարժում

1) ա-1, բ-2, գ-2, դ-1
2) ա-2, բ-2, գ-1, դ-1
3) ա-1, բ-1, գ-2, դ-1
4) ա-2, բ-1, գ-2, դ-2

4 **Ո՞ր շարքի բառերի և բառաձևերի բոլոր վանկերն են փակ.**

1) կապտել, վայրկյաններ, ընդունված
2) համրանալ, պատճառներ, անցկացնել
3) կրծքավանդակ, ընտրարշավ, հնձվոր
4) աջհամբույր, տնկարան, ենթարկվել

5 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

1) գիշերերգ - ցայգերգ, արամբի - զամբիկ, գինարբուք - խնջույք, գինդ - ականջող
2) քանքար - անկյունաքար, բնիկ - երկրացի, բողոքել - տրտնջալ, բովանդակ - ամբողջ
3) գամվել - մեխվել, գաղտնապահ - փակբերան, գարշադեմ - տգեղ, գնահատելի - արժեքավոր
4) բլուր - բարձունք, անտունի - տնանկ, բծախնդիր - քմաճաշակ, բյուր - բազմաթիվ

6 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:**

1) հնարագետ - անճարտար, իրական - երևակայական, ակնածել - արհամարհել, ժուժկալ - անզուսպ
2) գիտուն - իմաստակ, բիրտ - քնքուշ, բաց - գոց, մարմնեղ - վտիտ
3) պերճ - անշուք, բարեկեցիկ - անապահով, հաստատուն - անկայուն, հոռետես - լավատես
4) լայնաթիկունք - պարթև, խորապես - հարևանցի, մեծահարուստ - ընչազուրկ, կալանավորել - ձերբազատել

7 **Ո՞ր բառը որ բացատրությանն է համապատասխանում.**

| | |
|---|---|
| ա. հածել | 1. դեգերել |
| բ. հեծել | 2. ձի նստել |
| գ. հեծկլտալ | 3. տառապել |
| դ. հեծնել | 4. հեկեկալ |

1) ա-3, բ-1, գ-2, դ-4
2) ա-1, բ-4, գ-3, դ-2
3) ա-1, բ-2, գ-3, դ-4
4) ա-1, բ-3, գ-4, դ-2

8 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ բարդ:**

1) բանսարկու, մարդատար, գովազդատու, բանասեր
2) թքագեղձ, սրախողխող, անթացուպ, չվերթ
3) մակնիշ, ջրմուղ, հավաքատեղ, որկրամոլ
4) կոճգամ, գրագետ, սնահավատ, ապշահար

9 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ:**

1) ցուցափայտ, երկրամաս, գետաձի, սեպագիր
2) ջրատար, կցակար, գորգեզր, սալաքար
3) թռչնաբույծ, գիսաստղ, կողաթև, միջնապատ
4) բնագիր, անվադող, պահանջատեր, ուղեցույց

10 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ա* ներքին հոլովման:**

1) վարժություն, ազգանուն, հենապյուն, բութանկյուն
2) շրշյուն, ծանրություն, ամառ, մաքրություն
3) աղջիկ, տոհմանուն, գալուստ, փոստատուն
4) հայրանուն, սուրանկյուն, աշուն, խիզախություն

11 **Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը ածական *չէ:***

1) Եվ քո **քարացած** բռունցքում հիմա
Ես սուրն եմ դնում ահեղ ճշմարտի:
2) Ու կռունկների քարավանը նորից
**Անուշ** կարկաչով գարունն է բերում:
3) Արարչագործ աստղի առաջ
**Վշտոտ** սիրտս բացեցի:
4) Բաղերը **վայրի** թռան շվարած.
Ո՞վ է արշավում մռայլ գիշերով:

12 **Ո՞ր շարքի բոլոր բայաձևերն են դրված ներկա ժամանակով:**

1) վեր եմ կենում, ելնում եմ, կամ, մի՛ եղիր
2) բերես, ցոլցլում են, տանում է, մի՛ գնա
3) դառնում եմ, գալիս եմ, կանք, լալիս են
4) գնա՛, տալիս եք, մի՛ թռիր, բերում եմ

13 **Ո՞ր նախադասության մեջ *անգամ*-ը վերաբերական *չէ:***

1) Տասն անգամ չափի՛ր, նոր մեկը կտրի՛ր:
2) Քեզ հանդիպելու մտքից անգամ սարսափում եմ:
3) Մարտում ընկածների անունն անգամ չհիշատակվեց:
4) Անգամ երազել չեմ կարող Փարիզ գնալու մասին:

14 **Ո՞ր նախադասությունն է բարդ:**

1) Ես ձեզ ասում եմ՝ կգա Ոգու սով…
2) Մի թագավոր սովորություն ուներ ժողովրդի մեջ ծպտված շրջելու՝ իմանալու համար ժողովրդի՝ իր մասին ունեցած կարծիքը:
3) Ավտոմեքենաների բեռնված շարասյունը ձգվում է լեռն ի վեր՝ դեպի Մանթաշի ձորն իջնող խճուղին:
4) Բացվում է հեքիաթային մի աշխարհ՝ անկրկնելի գեղեցկություններով, վեհատեսիլ Արագածով, փրփրաբաշ ջրերով ու վիթխարի ժայռերով:

15 **Ո՞ր հատվածում են ընդգծված բոլոր բառերը նախադասության անդամ:**

1) Այսօր եղի՛ր որպես մայր,
Բարի, **քնքուշ**, նրբազգաց,
Նստի՛ր խաղաղ մահճիս մոտ,
**Մութ** գիշերին հետս լաց…
2) Մենք բաժանված ենք: Օրերի փոշին
**Դեռ** չի աղոտել քո դեմքը գունատ,
**Բայց** ես օտար եմ արդեն այն հուշին,
Ուր վեհ էր երազը, ու բախտը՝ ժլատ:
3) Ամայի փողոցում մեգ-մշուշ,
Լռություն է մեռած,
Կարոտ է իմ սիրտը **քո** անուշ
Գգվանքին, ի՛մ **երազ**…
4) Լռել է հեռվում երգը ցնծության
Եվ **գուցե** չկար իմ ծնված ժամից,
Գուցե ես **ինքս** եմ հնարել նրան,
Որ սուտ հուշերով մխիթարեմ ինձ…

16 **Ո՞ր նախադասության ընդգծված բառն է ուղիղ խնդիր:**

1) Մենք լսեցինք Կոմիտասի մի քանի **ստեղծագործություններ:**
2) Վերջապես մեծ դժվարությամբ հասանք **տուն:**
3) Մենք հոգնեցինք **ամենքին** անտեղի սպասելուց:
4) **Լիճն** ասես հրդեհվել էր վերջալույսի շողերից:

17 **Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**




1) Եթե հաշվեր իր վերքերը, չէր կարողանա անհամար սպիների մեջ գտնել թուրքից ստացած առաջին վերքը, որը մի ժամանակ սոսկալի ցավում էր:
2) Արծրունյաց Սենեքերիմ արքան, որ փակվել էր Վանի անառիկ ամրոցում, երեց որդուն՝ Դավթին, ուղարկել էր Կոստանդնուպոլիս՝ բանակցություններ վարելու:
3) Երբ Սիմեոնի բանակը, դուրս գալով քաղաքի դարպասներից, շարժվեց հարավ-արևելք, Կողոնիայի բարձր աշտարակները դեռևս մշուշի մեջ էին:
4) Երբ զինվորները հեռացան, որպեսզի երեսնիվայր ընկնեն կանաչների վրա, մենք գլխահակ կանգնեցինք՝ ասես ինչ-որ բանից սարսափած:

18 **Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

1) Պեղումների ժամանակ գտնվել են բազալտե գեղեցիկ սկահակներ, որ զարմացնում են քարի մշակման տեխնիկայով:
2) Հայկական գրանիտը՝ որպես բարձրորակ նյութ, լայն կիրառություն ունի քանդակագործության մեջ:
3) Կա և՛ թախիծ այդ երգի մեջ, կարծես մեկը մոլորվել է խոր ձորերում և տխուր հեկեկում է, կա և՛ ջինջ ուրախություն, երբ լեռների վրա ծագում է արևը, վերջապես կա և կարոտի հնչյուններ՝ վերադարձի և վերջին հույսի:
4) Արաբական Միացյալ Էմիրությունները կազմավորվել է 1971 թ. դեկտեմբերին և գտնվում է Պարսից ծոցի հարավային ափերին:

19 **Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*-Դու արածներիդ մասին մտածի՛ր, թո՛ղ՝ ես էլ իմ գործը անեմ,-չթաքցրած հեգնանքով ասաց մտախոհ իշխանը եղբորը:*

1) Մտախոհ իշխանը չթաքցրած հեգնանքով ասաց եղբորը, որ նա թող իր արածների մասին մտածի, ինքն էլ իր գործը անի:
2) Մտախոհ իշխանը չթաքցրած հեգնանքով ասաց եղբորը, որ նա իր արածների մասին մտածի, թողնի՝ ինքն էլ իր գործը անի:
3) Իշխանը չթաքցրած հեգնանքով մտախոհ ասաց եղբորը, որ նա թող իր արածների մասին մտածի, նա էլ իր գործը կանի:
4) Մտախոհ իշխանը չթաքցրած հեգնանքով եղբորն ասաց, որ ինքը իր արածների մասին մտածի, նա էլ իր գործը կանի:

20 **Ո՞ր նախադասության մեջ բուք *չպիտի* դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Օվկիանոսներ և մայրցամաքներ կամրջելով հայ գրերը իրար կապեցին մեր աշխարհասփյուռ հատվածները և բերին հանգուցեցին մայր հայրենիքին:
2) Մեսրոպյան գիրն էր որ պահեց պահպանեց մեր ոգին այն ամենը ինչ բարձրացնում է մեզ բոլոր բարձրերին հավասարեցնելով:
3) Հայ գիրը ի մի հավաքեց մեր ցիրուցան մասնիկները ինչպես սրինգը գառնուկներին կամ լաստը նավաբեկյալներին:
4) Վաղուց մարել են այն ծափերը որոնք ի պատիվ Արտավազդ արքայի հեղինակած թատերախաղի դղրդում էին Արտաշատի հոյակերտ կամարների տակ:

21 **Հեղինակներից ո՞րը որ բնագավառն է ներկայացնում:**

| | |
|---|---|
| ա. Մովսես Խորենացի | 1. բանաստեղծություն |
| բ. Ֆրիկ | 2. պատմագրություն |
| գ. Վարդան Այգեկցի | 3. վարքագրություն |
| դ. Կորյուն | 4. առակագրություն |

1) ա-3, բ-2, գ-4, դ-1
2) ա-1, բ-2, գ-4, դ-3
3) ա-2, բ-3, գ-1, դ-4
4) ա-2, բ-1, գ-4, դ-3

22 **Ո՞ր պնդումը *ճիշտ չէ* Վահան Տերյանի ստեղծագործության վերաբերյալ:**

1) «Մթնշաղի անուրջներ» շարքում կան տխրության, թախծի տրամադրություններ, ինչպես նաև գարնան պատկերներ:
2) Վ. Տերյանը իր բանաստեղծությունները դասավորեց շարքերի մեջ՝ հետևելով Հովհ. Թումանյանին:
3) «Երկիր Նաիրի» շարքում բանաստեղծն արտահայտել է տագնապ հայրենիքի ապագայի համար, կարոտ հայրենիքի, հայրենի գյուղի հանդեպ:
4) Վահան Տերյանը գրել է նաև սոնետներ, տրիոլետներ և գազելներ:

23 **Տողերի ո՞ր դասավորությունն է ճիշտ:**

ա. Երփին երփնունակ ծաղկին,
շողշողէր պտուղն ի ճղին
բ. Գոհար վարդն վառ առեալ
ի վեհից վարսիցն արփենից
գ. Ի համատարած ծովէն
պղպըջէր գոյնըն այն ծաղկին
դ. Ի վեր ի վերայ վարսից
ծաւալէր ծաղիկ ծովային

1) բ, դ, գ, ա
2) գ, ա, դ, բ
3) բ, գ, ա, դ
4) գ, ա, բ, դ

24 **Հատվածներից որը Միքայել Նալբանդյանի ո՞ր բանաստեղծությունից է:**

ա. Մեր հայրենիք, թշվառ, անտեր,
Մեր թշնամուց ոտնակոխ,
Յուր որդիքը արդ կանչում են
Հանել յուր վրեժ, քեն ու ոխ:
բ. Գերության շղթան ինձ զգալի չէր,
Եվ ոչ բռնության անգութ ճանկերը.
Ձեզանից հետո ծանրացան նոքա,
Ո՜հ, անիծում եմ ես այն օրերը:
գ. Մինչ գիշերը անհանգիստ,
Օրորոցում կապկապած՝
Լալիս էի անդադար՝
Մորս քունը խանգարած…
դ. Լո՛ւռ կաց դու, քնա՛ր, այլ մի՛ հնչեր ինձ,
Ապոլո՛ն, հե՛տ առ դարձյալ դու նորան,
Տո՛ւր մի այլ մարդու, որ ընդունակ է
Ձոհ բերել կյանքը սիրած աղջկան:

1. «Մանկության օրեր»
2. «Իտալացի աղջկա երգը»
3. «Ազատություն»

1) ա-3, բ-1, գ-3, դ-2
2) ա-3, բ-2, գ-1, դ-2
3) ա-2, բ-1, գ-3, դ-1
4) ա-1, բ-3, գ-3, դ-2

**25** **Արտագերս ամրոցում ապաստանած Որմիզդուխտը ինչպե՞ս է վարվում Մերուժան Արծրունու հետ Ռաֆֆու «Սամվել» պատմավեպում:**

1) Արհամարհանքով մերժում է Մերուժանի սերն ու թախանձանքները:
2) Ուրախանում է Մերուժանի փառասիրական պատրանքներից ու ոգևորում նրան:
3) Խոստովանում է իր փոխադարձ սերը Մերուժանին:
4) Դրվատում է Մերուժանի դավաճանությունը:

**26** **Ձախում նշված են Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունների վերնագրերը, իսկ աջում՝ դրանցից մեկական հատված. լուծման տարբերակներից ո՞րն է ճիշտ:**

ա. «Է՜յ, ջան-հայրենիք»
բ. «Սև-մութ ամպեր»
գ. «Օտար, ամայի ճամփեքի վրա»
դ. «Հայրենիքիս»

1. - Է՜յ Մանթաշի մարմանդ հովե՜ր,
Իմ դարդրս որ ձերն եղներ,
Ձեր ծաղկանուշ բուրմունքն անուշ
Թույն ու տոթի կփոխվեր:
2. - Որ արտուտի պես վե՜ր ու վե՜ր ճախրեմ
Նոր օրվա ծեգիդ, ազի՛զ հայրենիք,
Ու անո՛ւշ երգեմ, բա՛րձր ու զիլ գովեմ
Կանաչ արևդ, ազա՛տ հայրենիք…
3. Կընոջ համբույրին է՛լ չեմ հավատա,
Շուտ կըմոռանա նա վառ արցունքներ.
Շարժվի՛ր, քարավա՛նս, ինձ ո՞վ ձայն կըտա,
Գիտցի՛ր, լուսնի տակ չըկա ուխտ և սեր:
4. Եվ սրում էին ճիչով խնդագին
Անգղներն իրենց կտուցները վես
Քո արևակեզ ժայռերի վրա՝
Հոշոտելու քեզ…

1) ա-1, բ-2, գ-4, դ-3
2) ա-2, բ-4, գ-3, դ-1
3) ա-2, բ-1, գ-3, դ-4
4) ա-1, բ-2, գ-3, դ-4

**27** **Ինչպե՞ս է դասավորվում Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքի՝ իրավաբանություն ուսումնասիրող երիտասարդի ճակատագիրը:**

1) Հայտնի փաստաբան դառնալով՝ կարողանում է վրեժ լուծել իրեն դավաճանած աղջկանից:
2) Երիտասարդը դառնում է կասկածելի դատեր պաշտպանող իրավաբան և անբուժելի հարբեցող:
3) Սիրո մեջ մերժված երիտասարդին հուսահատությունն ինքնասպանության է հասցնում:
4) Կիսատ թողնելով իր ուսումնառությունը՝ նա վերադառնում է հայրենի քաղաք, որպեսզի վրեժ լուծի սիրած աղջկա ամուսնուց:

28 **Դանիել Վարուժանի ստեղծագործության վերաբերյալ ո՞ր պնդումը ճիշտ *չէ:***

1) «Հացին երգը» ժողովածուն լույս է տեսել բանաստեղծի մահից հետո:
2) Դանիել Վարուժանը պանդխտության թեմայով բանաստեղծություններ չի գրել:
3) Դ. Վարուժանի «Հեթանոս երգեր» ժողովածուն լույս է տեսել 1912 թվականին. այն բաղկացած է երկու ենթաշարքից՝ «Հեթանոս երգեր», «Գողգոթայի ծաղիկներ», և «Հարճը» պոեմից:
4) «Ձոն» բանաստեղծության մեջ Դ. Վարուժանն օգտագործել է Վահագնի առասպելի ոճական որոշ հնարքներ:

29 **Նշել բանաստեղծական տողերի ճիշտ հաջորդականության տարբերակը:**

ա. Ու լեռնային վըտակների
բ. Հընչյուններով դյութական
գ. Մըտան կաղնին հաստաբուն
դ. Կանչում էին հրրաշալի
ե. Անտես, անհետ չըքացան
զ. Ալիքները պաղպաջուն
է. Ու հենց շողաց ցոլքն արևի
ը. Խոր սուզվեցին ակն աղբյուրի

1) ը, գ, է, ե, դ, ա, բ, զ
2) դ, բ, է, ե, ը, գ, ա, զ
3) է, գ, ա, զ, դ, բ, ը, ե
4) ը, զ, ա, գ, է, դ, բ, ե

30 **Ակսել Բակունցի «Խոնարհ աղջիկը» պատմվածքի ստորև բերված սյուժետային դրվագներից որո՞ւմ սխալ կա:**

1) Բարեկենդանի օրը ուսուցիչը Խոնարհին տեսնում է աղջիկների հետ իրենց դիմացի տան կտուրի վրա ձյունով խաղալիս:
2) Հրաժեշտի օրը Խոնարհը աշակերտների հետ եկել էր դպրոցի բակ՝ ուսուցչին հրաժեշտ տալու:
3) Հեղինակ-հերոսը՝ 17-18 տարեկան մի երիտասարդ՝ բանտից նոր դուրս եկած, իր բարեկամի առաջարկով գնում է Ձորագյուղ և զբաղվում ուսուցչությամբ:
4) Ուսուցիչը Խոնարհին առաջին անգամ տեսնում է անտառի բացատում:

31 **Ո՞ր պնդումը ճիշտ *չէ* Հովհաննես Շիրազի «Թագադրում» բանաստեղծության վերաբերյալ:**

1) Հեղինակը պատկերում է բնության հզոր ուժերի առջև թույլ մարդու անզորությունը:
2) Բանաստեղծը սեփական երջանկությունը պայմանավորում է համայն մարդկության երջանիկ լինելու հանգամանքով:
3) Բանաստեղծը չի ցանկանում, որ կյանքի հավերժական տոնի մեջ սողոսկի մահը:
4) Գարնան թագավոր թագադրվելով՝ բանաստեղծը ուզում է մարդուն տեսնել անմահ, հավերժի բախտով ցնծացող:

32 **Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

*Ձեռքերը քոր էին գալիս. նա անհագուրդ պահանջ էր զգում կտավին հանձնելու այդ տեսարանը, որը ժամեր հետո կարող էր անէանալ՝ վերածվելով թանձր մշուշի: Բայց այդ պահին ո՞վ կտար նրան վրձին ու կտավ: «Ա՜խ, ե՞րբ ազատ հայրենիք կունենանք, որ ձեռքս նորեն վրձին առնեմ»,- խորը հառաչելով՝ մտածեց նա:*

1) հրապարակախոսական
2) գեղարվեստական
3) առօրյա-խոսակցական
4) վարչական

33 **Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ *չկա:***

- Քամին Արագածի արևի ոսկեզօծումից զարթնող բնության թովչական գրկում աստղերի արցունքից գոյացած վճիտ լճակի փաղաքուշ հովը կբերի, հորդացած ջրերի խենթությունն ու ծաղիկների նրբաբույրը:
- Գիտեմ՝ եկող գարնանն էլ ծառը կծաղկի, հետո պտուղ կտա, և գյուղի տղաների հերթական սերունդը չհամբերելով կմագլցի վեր՝ պոկելու դեռևս կանաչ պտուղները:
- Նայելով ծառին՝ ես անընդհատ զարմանում ու մտքումս հարց եմ տալիս.
  - Ինչպե՞ս ես դիմանում, ծիրանի՛ ծառ:
- Եվ մի լուռ իրարանցում սկսվեց. տանտիրուհին թեքվում, երեխաների ականջին ինչ-որ բաներ էր ասում և ճամփու դնում:
- Հիմա էլ նույն զգացումն եմ ապրում Միացյալ Նահանգներում՝ զարմանք պատճառելով թե՛ ուղեկիցներիս և թե՛ հյուրընկալ հայրենակիցներիս:

34 **Նախադասություններից քանիսո՞ւմ որոշիչ հողի սխալ գործածություն կա:**

- Սևաշղարշ մութն արդեն կլանել էր կիսավեր քաղաքն իր շրջակա լեռներով ու ձորերով:
- Ոսկանն այժմ քայլում էր խորդուբորդությունների միջով:
- Ռաֆֆին գիտեր՝ ինքը ով է. նա իրեն ավելի լավ էր ճանաչում:
- Գլաձորում ստեղծված ձեռագրերն հեղինակություն էին վայելում ժամանակի դպրոցներում:

35 **Հոմանիշների քանի՞ եռյակ կարող է կազմվել տրված բառացանկից.**

զանցանք, հակառակ, հանցանք, ներհակ, վարգ, հակոտնյա, մեղք, հովատակ, մեղկ, նժույգ, հրովարտակ, երիվար:

36 **Պնդումներից քանի՞սն են սխալ Եղիշե Չարենցի ստեղծագործությունների վերաբերյալ:**

- «Անվերնագիր» բանաստեղծությունն ունի «Կնոջս և բարեկամիս՝ Իզաբելլային» ընծայականը:
- «Տաղ անձնական» բանաստեղծությունը նվիրված է Արփենիկ Չարենցին:
- «Գանգրահեր տղան» չափածո նովելում Չարենցը տալիս է գալիք Հայաստանի պատկերը:
- «Դանթեական առասպել» պոեմն ունի կենսագրական հիմք. բանաստեղծն ինքը կամավորական խմբով եղել էր Վանում և տեսել սոսկալի պատկերներ:

**37** **Տրված հատվածներում գոյականով արտահայտված քանի՞ հատկացուցիչ կա:**

- Հողմը սրարշավ
  Հոգուս դալկացած ծաղիկ հույսերի
  Թերթերը տարավ:
- Կցրեմ կյանքի հուշերը ցավոտ
  Ու հեքիաթային լույսեր կվառեմ:
- Ինձ լուռ մոռացան, ինձ չհիշեցին,
  Իմ սրտում մեռան սեր, ցնորք ու
  հույս:
- Ծեծված, տրորված աշխարհում անդուռ,
  Ո՞ւմ պիտի պարզի աչքերը տխուր
  Եվ ո՞ւմ պատի տակ խավար գիշերով
  Պիտի հանգչի նա մերժված ու խռով:
- Նրա խոսքերի մեղմ օրորում
  Աշխարհը թվաց ինձ անեզերք,
  Կարծես հնչում էր իմ օրերում
  Աստղերի երկրում հյուսված մի երգ:

**38** **Տրված հատվածում քանի՞ բառ կա, որոնցում վերջին ձայնավորը *չի* շեշտվում:**

Կայսրը խառնվեց ամբոխին: Երկու մատը բերանը դրած՝ Զողիկը երկար շվացրեց մթության մեջ, մինչև մոտակա խրճիթներից ելան եգիպտուհիներ, հույն կանայք, որոնք, խղճուկ կոտրատվելով, սկսեցին պարել: Ներոնը սպասավորի հետ սկսեց ինչ-որ բան պայմանավորվել, բայց բարեկամները տարան Ներոնին, քանի որ չցանկացան, որ ընկներ տհաճությունների մեջ:

**39** **Տրված նախադասության ձևաբանական վերլուծության տարբերակներից որոնցո՞ւմ սխալ *չկա:***

*Ես, սակայն, վայրկյաններ անց սթափվում էի, և հոդս էին ցնդում մտացածին երևակայություններս. դարձյալ հայտնվում էի մեր՝ փարթամ կանաչի մեջ թաղված փողոցում՝ միշտ բանուկ, եռուզեռով լի:*

1. **մեր** – անձնական դերանուն, սեռական հոլով, **մտացածին** – ածական
2. **թաղված** – անդեմ բայ, հարակատար դերբայ, **բանուկ** – գոյական, ուղղական հոլով
3. **սթափվում էի** – անկատար անցյալ, չեզոք սեռ, **սակայն** – համադասական շաղկապ
4. **երևակայություններս** – ***ա*** ներքին հոլովման գոյական, **միշտ** – ժամանակի մակբայ

**40** **Նշել այն նախադասությունների համարները, որոնցում պատճառական բայ կա:**

1. Գետնափորի թանձր խավարն ու գերեզմանային լռությունը հիշեցնում էին, որ այդ բոլորն արդեն անդարձ երազ է:
2. Երկար ժամանակ քարացած հայացքով նայում էր խավարի մեջ. հետո նրա պրկված դիմագծերն ասես թուլացան:
3. Վերջացնելով նախադասությունը՝ նա ավազ ցանեց վերջին տողերի վրա և նայեց Ոսկանին:
4. Ամեն առավոտ, բերելով օրվա ուտելիքը և թարմացնելով կժի ջուրը, սպասավորը միշտ կրկնում էր նույն խոսքերը:
5. Աբեղան տխուր ժպտում էր, հանգստացնում պատանուն՝ ասելով, որ ինքը լավ է զգում:

41 **Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերբայական դարձված կա:**

1. -Ինչո՞ւ ես այսպես ուշացումով երևում,- ասաց պահակապետը:
2. Ըստ իս, այնուամենայնիվ, նա կարող էր տիկնոջ արտաքինի մասին ավելի սիրալիր արտահայտվել:
3. Աղջիկը խենթորեն սիրահարվել էր այդ մարդուն և ոչինչ չէր ուզում հասկանալ:
4. Նա գազազած շուռ եկավ և անմիջապես անհետացավ:
5. Դուք ուզում եք փրկել ձեր հոգիները և ցույց տալ, որ թագավորի պաշտպաններն եք:
6. Նրանք իրենց զավակներին բերում էին դդումե ամանով օղի կամ նրանց վաղուց մոռացած ատրճանակները:

42 **Նշել այն բառերի համարները, որոնցում ձայնավորի հնչյունափոխություն կա.**

1. մսամթերք, 2. ատենակալ, 3. հանրամատչելի, 4. զգուշավորություն, 5. զինագործ, 6. տեղեկատվություն, 7. խայտաբղետ, 8. հազարաթերթիկ, 9. գունային:

43 **Նշել այն բառերի համարները, որոնց բացատրությունը սխալ է.**

1. **մեղանչել** – ներում խնդրել
2. **մատռվակ** – գինեգործ
3. **պատեհապաշտ** – պատվասեր
4. **խթանել** – թափ հաղորդել
5. **գողտրիկ** – գողունի
6. **գործակալ** – որևէ գործի մեջ խիստ զբաղված անձ

44 **Նշել թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը:**

1. Այսօր վիճակն այլ է. մենք վերապահությամբ ենք վերաբերվում «շիկացած գազանին»՝ հասկանալով, որ նրա կենսագործունեությունից են կախված մոլորակի կլիման և յուրաքանչյուրի գոյությունը: Մագնիսական փոթորիկների օրերին մահացու ելքով սրտային նոպաները կամ ծովափնյա արևայրուքներից առաջացող քաղցկեղի դեպքերն այդ են վկայում:
2. Հենց այդ դարաշրջանում արևի վրա ոչ մի պայթյուն չի եղել. լուսատուն գոյատևել է շատ խաղաղ, ինչը ևս նպաստել է մարդկանց առողջ լինելուն:
3. Ռուս բանաստեղծ Անդրեյ Բելին գուցե գիտեր ինչ-որ բան և անչափ վախենում էր արևի ճառագայթներից. արևոտ օրերին երբեք չէր զբոսնում և լիարժեք կյանք էր վարում ամպամած օրերին կամ երեկոները:
4. Գիտնականներն ապացուցել են, որ 18-րդ դարը համաշխարհային պատմության մեջ մտել է որպես ամենասառը դար, քանի որ միջին ջերմաստիճանը մոլորակի մասշտաբով բավական ցածր է եղել, և նույն փաստի հետ է կապվել մարդկանց մահացության տոկոսի աննախադեպ ցածր լինելը:

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Դասական թվականների փոխարեն գործածվող դերանուններ չկան:
2. Հարցական բոլոր դերանունները հոլովվում են գոյականների նման:
3. ***Երբևէ, երբևիցե, ինչևէ, ինչևիցե, որևէ, որևիցե, ովևէ, ովևիցե*** բառերը անորոշ դերանուններ են:
4. ***Այստեղ, այսքան*** դերանունները փոխարինում են միայն մակբայներին:
5. ***Նույնպիսի, նույնքան, նույնչափ*** բառերը ցուցական դերանուններ են:
6. Ժխտական դերանունները մատնացույց են անում առարկա կամ հատկանիշ:

## Բ մակարդակ

46 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում միասին.**

1) **ել** (ու) մուտ, **մեծ** (բրիտանական), **վեց** (ամյա), **տուն** (դարձ)
2) **քաջ** (առողջ), **վեր** (հանում), **կենաց** (ու) մահու, **փոխ** (վարչապետ)
3) **թավալ** (գլոր), **թաթար** (մոնղոլական), **բառ** (գիրք), **հնուց** (ի) **վեր**
4) **գլուխ** (կոտրուկ), **մեջ** (բերում), **օրն** (ի)բուն, **տուն** (թանգարան)

47 **Ո՞ր շարքում հատուկ անվան գրության սխալ կա.**

1) Հարուն ալ Ռաշիդ, Դը Լոնգ, Վան Գոգ, Աֆղանստանի Իսլամական Հանրապետություն
2) Էլզաս-Լոթարինգիա, Գերմանիայի դաշնային Հանրապետություն, Լաս Վեգաս
3) Գայլ Վահան, Արմեն Լյուբեն, Սաուդյան Արաբիա, Սեյշելյան Կղզիների Հանրապետություն
4) Ադիս Աբեբա, Ռեչ Պոսպոլիտա, Սանտա Կրուզ, Սասանյան Պարսկաստան

48 **Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է *ու*-ն սղվել.**

1) փախստական, արթնանալ, սրճարան, թրեր
2) լեզվաբան, թաքնվել, սնունդ, բազկաթոռ
3) ջրաչափ, ծածկոց, գարնանային, հնագետ
4) դալկացած, անասնապահ, աշնան, մածնաթան

49 **Փակագծերում տրված բառերից մեկը տվյալ նախադասությանը համապատաս–խանում է, մյուսը՝ ոչ. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

ա. (1. Հրատարակչությունը, 2. Հրատարակությունը) չէր պաշտպանել գրողի հեղինակային իրավունքները:
բ. Կազմակերպությունը պարտքերի պատճառով (1. լուծվել, 2. լուծարվել) էր:
գ. Հարթակի վրա երևաց անծանոթը՝ (1. հովարով, 2. հովհարով) գլխարկը գլխին:
դ. Լիճը իր (1. շրջակա, 2. շրջապատող) լեռներով թաղված էր թանձր մառախուղի ու ցածում սահող ամպերի մեջ:

1) ա-2, բ-1, գ-1, դ-2
2) ա-2, բ-2, գ-2, դ-2
3) ա-1, բ-2, գ-1, դ-1
4) ա-1, բ-1, գ-2, դ-1

50 **Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ *չեն:***

1) **մատաղ** սերունդ – **մատաղ** անել
2) ներկ **բռնել** – սխալը **բռնել**
3) տաք **եղանակ** – երգի **եղանակ**
4) **անարգել** մեկնել – **անարգել** մարդկանց

51 **Ո՞ր տարբերակում են համապատասխանում դարձվածքները և դրանց իմաստները:**

1. արյունը գլխին խփել
2. լեզուն բռնվել
3. քարը փեշից թափել
4. զենքերը վայր դնել

ա. համոզվել
բ. հանձնվել
գ. զայրանալ
դ. կարկամել

1) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ
2) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա
3) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
4) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա

52 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմված *մակ-* նախածանցով.**

1) մակագրություն, մակբայական, մակերևույթ, մակընթացություն
2) մակնիշ, մակերիկամ, մակաղել, մականախաղ
3) մակուղեղ, մականուն, մակդիր, մակույկ
4) մակերես, մակաբուծաբան, մակարդ, մակաբույս

53 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրանիշ գոյականներ:**

1) զորաերթ, սպա, անապատական, տառեխ
2) հավատարմագիր, ծաղկատոն, կիզակետ, բաժնետոմս
3) տոհմածառ, հենասյուն, պատվիրակ, պտուտակ
4) հակինթ, դիտորդ, կողմնակից, բաժակ

54 **Ո՞ր նախադասության մեջ է ընդգծված անկանոն բայը տվյալ ժամանակաձևում անկանոնություն դրսևորել:**

1) Ասա՛՝ ում ընկերն ես, **ասեմ**՝ ով ես դու:
2) **Եղի՛ր** քաղաքավարի բոլորի հետ, մարդամոտ՝ շատերի հետ, տնավարի՝ ոմանց հետ:
3) Հայաստանի որ անկյունում որ **տեսնես** նրանց, մենակ լինեն կամ շարքի մեջ, հաղթողի պես բարձր են պահում իրենց գլուխները:
4) Թող **գան**, խնդրեմ, բոլոր նրանք, Ովքեր գիտեն փայլատակել կարմիր գինու թնդությունից...

55 **Արգելական հրամայականի ձևերից քանի՞սն են սխալ.**

*մի՛ խոսիր, մի՛ հեռացեք, մի՛ք մոտենա, մի՛ հավատա, մի՛ խառնվի, մի՛ կոտորեցեք, մի՛ տար, մի՛ կարծեք, մի՛ փախեք, մի՛ թող:*

1) երեքը
2) չորսը
3) մեկը
4) երկուսը

56 **Ընդգծվածներից ո՞րն է շաղկապ:**

1) **Ինչ** որ ես չեմ ասե, նա կասե վաղը,
Օրերը ծուխ կըլին, տարին կմնա:
2) **Ո՞չ** տրտունջ, **ո՞չ** մրմունջ սգավոր,
Հեռացի՛ր, մոռացի՛ր ինձ հավետ:
3) Եվ **ապա** ընդոստ կանգնում է ոտի,
Հեծնում հրաբաշ նժույգը ռազմի...
4) Համբույրներ կու գան հովեն ու ծովեն,
Համբույր՝ լույսեն, **որ** չորս դիս կը ծաղկի:

57 **Ո՞ր նախադասության մեջ է պարագան արտահայտված կապական կառույցով:**

1) Իր ժամանակը անտեղի վատնում էր՝ պարապ թափառելով:
2) Ես չմոռացա այս կարևոր իրողության մասին տեղեկացնել ընկերներիս:
3) Ուտելուց առաջ անպայման պիտի լվացվեր:
4) Վաղ առավոտյան՝ արևածագից առաջ, արդեն ոտքի վրա էր:

58 **Տրված նախադասություններում ընդգծված դերբայական դարձվածների շարահյուսական պաշտոնները պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

ա. Ճանապարհորդները ճշտեցին **վերելքից առաջ մի փոքր հանգստանալու** վայրը:
բ. Նոր իմացվեց խմբի՝ **արտասահմանից վերադառնալը:**
գ. Օդանավակայանում բարձրախոսով հայտնեցին **Բեյրութից ժամանող ինքնաթիռի վայրէջք կատարելը:**
դ. Նրա ձախողման պատճառը **ուսուցչի հանձնարարությունները ժամանակին չկատարելն** էր:

1. ենթակա, 2. ստորոգելի, 3. որոշիչ, 4. ուղիղ խնդիր

1) ա-3, բ-1, գ-4, դ-2
2) ա-4, բ-4, գ-1, դ-3
3) ա-3, բ-4, գ-1, դ-2
4) ա-2, բ-4, գ-1, դ-1

59 **Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասության երկրորդական նախադասության բնույթը սխալ նշված:**

1) Կատարվեց այն, ինչին սպասում էին արդեն մի քանի օր: *(հանգման անուղղակի խնդիր)*
2) Հայաստանում գրագետ մարդ չմնաց, որ կարդացած չլիներ այդ ոգեշունչ հոդվածը: *(որոշիչ)*
3) Գրում էր դժվարությամբ, կարծես գրչի ճռնչյունով փորագրում էր պղնձի վրա: *(ձևի պարագա)*
4) Պետք չէ աջակցել նրան, ով արվեստի մեջ ընտրում է թույլ դիմադրության ճանապարհը: *(հանգման անուղղակի խնդիր)*

60 **Ո՞ր տարբերակում է պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը սխալ փոխակերպված բարդի:**

1) *Յուրաքանչյուր ճամփորդ մի տեսակ սրբազան պարտականություն է համարել Շվեյցարիային հիացմունքի տուրք վճարելը:*
Յուրաքանչյուր ճամփորդ մի տեսակ սրբազան պարտականություն է համարել այն, որ հիացմունքի տուրք վճարի Շվեյցարիային:
2) *Ամենահետաքրքիրը ոչ մեկի՝ մյուսի արածով գոհ չլինելն էր:*
Ամենահետաքրքիրն էր, որ ոչ մեկը մյուսի արածով գոհ չէր:
3) *Բուսականությամբ հարուստ արևելքում ծնված բանաստեղծն իր անշուք բնակարանը շրջապատել էր բնության գեղեցիկ և գույնզգույն ժապավենով:*
Բանաստեղծը, որ ծնվել էր բուսականությամբ հարուստ արևելքում, իր անշուք բնակարանը շրջապատել էր բնության գեղեցիկ և գույնզգույն ժապավենով:
4) *Թուրքական հեղափոխությունն ավարտվելուց հետո Միամանթոն ուղևորվեց Ամերիկա:*
Երբ թուրքական հեղափոխությունն ավարտվեց, Սիամանթոն ուղևորվեց Ամերիկա:

61 **Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Ու եթե երբևէ մեկը զգուշությամբ թափանցել է այնտեղ, ունկնդրել նրա ձայները բազմազան, կհամոզվի, որ դա, անշուշտ, մի ուրույն աշխարհ է:
- Հասմիկը սրտատրոփ սպասում էր այն օրվան, երբ օտարությունից կվերադառնար իր սիրելին և կամուսնանային, տուն ու տեղ կդնեին:
- Գյուղից վերև՝ լեռան գագաթին՝ ավերակ մատուռի մոտ, կանգնած էին մի աղջիկ՝ երկար շրջազգեստով և լայնեզր գլխարկով մի տղա:
- Երբ անտառում հողմ է լինում, ծառերը, մեջք մեջքի տված, օրորվում են ու ճռնչում, թփերը՝ խշշում:
- Կարմիր պառավ ձին աչքերը չէր թարթում. եթե թարթեր, գայլը տեղից տեղ կցատկեր, և ինքը չէր հասցնի նկատել, ինչպես թշնամին մոտեցավ քուռակին:

1) հինգում
2) երկուսում
3) երեքում
4) չորսում

62 **Ո՞ր շարքում են միայն Ալեքսանդր Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքի հերոսները:**

1) Ալմաստ, Կավալլարո, Չաուշենկո
2) Լուկրեցիա, Անտոնինա, Չելլինի
3) Լուիզա, սինյորա Ստեֆանիա, Ռոզալյա
4) Լևոն, Սուրեն, Իցկո

63 **Գրական ո՞ր ուղղության բնորոշ գծերն են՝**

- բանականության պահանջ, տրամաբանական օրենքներով ղեկավարվելու կոչ՝ հաճախ ի վնաս հուզականության,
- ժանրերի բաժանում «բարձր» (հերոսական պոեմ, ողբերգություն, ներբող) և «ցածր» (կատակերգություն, առակ) խմբերի:

1) սիմվոլիզմի
2) ռեալիզմի
3) կլասիցիզմի
4) ռոմանտիզմի

64 **Միայն արևմտահայերենին բնորոշ քանի՞ բառ կամ բառաձև կա տրված հատվածում:**

Տու՛ր ինձի, Տե՛ր,
ուրախությունն անանձնական,
Ու չըլլա որ ուրիշներու կոծն ու կական
Խեղդել ուզեմ ջրվեժին մեջ դափիս ձայնին…

65 **Բառերից քանիսո՞ւմ *երկհնչյունի* հնչյունափոխություն կա.**

ալրաղաց, փութաջան, դրժել, սենեկապետ, արնաշաղախ, բուրումնալից, սուրալ, ուսուցչապետ, լուսատու, խուզարկու, նստացույց, ալեհույզ:

66 **Տրված դարձվածքներից քանի՞սն ունեն նաև ուղիղ իմաստ.**

ոտները լիզել, ոտքը կապել, ոտից գլուխ, ոտից-ձեռից ընկնել, ոտի տակը փորել, ոտքը քաշել, ոտքը քարին առնել, ոտին տեղ անել, ոտքը կտրել, ոտը գալ, ոտի տակ ընկնել, ոտը փուշ մտնել:

67 **Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների շարահյուսական վերլուծության սխալ կա:**

*Նա գիտեր՝ Աստված պատժում է հանցավորին և օգնում է արդար մարդուն, նաև գիտեր, որ իր թագավոր ամուսինը հանցավոր էր Ամրամի առաջ, և պիտի հաղթեր վերջինը, բայց այդ մասին ոչինչ չխոսեց:*

1. **հանցավորին** – ուղիղ խնդիր, **օգնում է** – պարզ ստորոգյալ
2. **իր** – հատկացուցիչ, **թագավոր** – ենթակա
3. **հանցավոր էր** – բաղադրյալ ստորոգյալ, **վերջինը** – ենթակա
4. **այդ մասին** – վերաբերության անուղղակի խնդիր, **ոչինչ** – ենթակա
5. **գիտեր** – պարզ ստորոգյալ, **Աստված** – ենթակա

68 **Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ կա:**

*Քնած թե արթուն՝ լսում էր երգը հեռավոր օվկիանի, ու հոգին, աշխարհից անէացած, տանում էր նրան հեռու մի աշխարհ, ուր ո՛չ վիշտ կար, ո՛չ էլ տառապանք:*

1. **հեռավոր** – տեղի մակբայ, **լսում էր** – անկատար անցյալ, ներգործական սեռ
2. **անէացած** – ածանցավոր բայ, **նրան** – անձնական դերանուն
3. **հեռու** – տեղի մակբայ, **մի** – անորոշ դերանուն
4. **ուր** – հարաբերական դերանուն, **կար** – պակասավոր բայ, ըղձական անցյալ
5. **քնած** – հարակատար դերբայ, չեզոք սեռ, **թե** – ստորադասական շաղկապ

69 **Նշել թվերը՝ ըստ տողերի ճիշտ հաջորդականության:**

1. Բայց շուրջս թող որքան կուզե աշխարհը այս խնդա, ցնդի
2. Ես-հաշմանդամ ու խելագար ու հավիտյա՜ն վտարանդի
3. Իմ բա՜րձր, հին ու աստղային երազների ճանապարհով
4. Դեպի երկի՜նք պիտի գնամ, դեպի եզերքը Ամենտի

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *ճիշտ է, սխալ է, չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Բարդ ստորադասական նախադասությունը և դերբայական դարձվածով պարզ նախադասությունը կարող են իրար հոմանիշ լինել:
2. Գերադաս և ստորադաս նախադասություններն իրարից կարող են անջատվել ստորակետով, միջակետով կամ բութով:
3. Ստորադաս նախադասության բաղադրյալ ստորոգյալի հանգույցը փոխակերպման ժամանակ կա՛մ վերանում է, կա՛մ վերածվում է որևէ դերբայի:
4. Գերադաս և ստորադաս նախադասությունները կարող են կապվել առանց շաղկապների:
5. Բաղադրիչ ստորադաս նախադասությունները կարող են իրար համադաս լինել:
6. Բոլոր բարդ ստորադասական նախադասությունները կարող են փոխակերպվել պարզի: